# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԳԴԱԿ ՍՊԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | ԳԴԱԿ | ԳԴԱԿ | Գլխարկ | ԳԴԱԿ ՍՊԸ | Ամենօրյա կիսաբրդյա գլխարկ: Գլխարկը կարվում է 2381 արտիկուլի կամ համանման կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից: Բաղկացած է սև լաքապատ գլխարկահովարից, գլխարկաբոլորքը 2581 ԻԱ արտիկուլի մուգ դեղնականաչավուն գույնի մահուդից, վրան երկու 14մմ մետաղյա ոսկեգույն ՀՀ զինանշանի պատկերով դրոշմված կոճակով ամրացվում է ոսկեգույն մետաղական մանրաթելերից հյուսված զարդապարան /հյուսապարան/: Գլխարկաբոլորքի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | վերևի և գագաթի միացման տեղով անցնում է 2 մմ լայնքով կապույտ մահուդից կանտ, էլեկտրոստվարաթղթե ներդիրով և 3,5 սմ լայնքով արհեստական կաշվե շրջանակով: Ներսից գլխարկահատակի եզրագծով տեղադրվում է համապատասխան չափսի զսպանակատիպ մետաղյա ժապավեն: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասում ամրացվում է ոսկեգույն մեծ գլխարկանշան, դափնեպսակի տեսքով, իսկ գլխարկակատարի վրա Հայաստանի Հանրապետության զինանշանը: Արտադրվում են 54-62 չափսերի: Գլխարկահատակի վրա ներսի կողմից կարվում է կաշվից պիտակ, որի վրա նշվում է արտադրող կազմակերպության անվանումը և գլխարկի չափսը: Գլխարկագագաթի բարձրությունը գլխարկաբոլորքի վերին եզրից 8,5-9սմ` կախված գլխարկի չափսերից: Գլխարկաբոլորքի բարձրությունը 4,8-5,2սմ: Սկսած 53 չափսի գլխարկից, գլխարկահատակի տրամագիծը պետք է լինի 29,5 սմ` հաջորդաբար յուրաքանչյուր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | չափսին ավելանում է 3մմ: Փաթեթավորումը` արկղերով, մեկ արկղի մեջ` 20 հատ: Արկղերը` պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Մատակարար կազմակերպությունը պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի կտորի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ` ՀՀ-ում հավատարմագրված որևէ կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Փորձաքննության դրական արդյունքներից հետո ներկայացնել նմուշ` հաստատելու համար համապատասխան ստորաբաժանմանը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГДАК ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | | |